



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N44-1-19

« 16 » ապրիլի 2012 թ.

հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ  
գ. Նորաշեն  
հեռ.093222-994  
026160119

ՀՀ Գեղարքունիքի մարզի  
Նորաշեն համայնքի ղեկավարի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5


ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնքի ղեկավարի՝ 25.02.2009թ. թիվ 3 որոշմամբ հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. մարտի 16-ի N45Ա հրամանի պահանջները.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

25.02.2009թ. թիվ 3 որոշմամբ հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հրամանի վերնագրում, տեքստում և հավելվածներում՝ « գյուղական համայնքի ղեկավար» բառերը փոխարինել «գյուղապետարանի» բառով:

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N29-1-18

« 10 » ապրիլի 2012 թ.

հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ  
գ. Նորաշեն  
հեռ. 093222-994  
026160119

ՀՀ Գեղարքունիքի մարզի  
Նորաշեն համայնքի ղեկավարի

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4**

Նորաշեն համայնքում համապատասխան սանիտարական վիճակի բարելավելու,  
բարեկարգումների, կանաչապատման, ծառատնկման և աղբահանության միջոցառում-  
ներ անցկացնելու մասին:


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՂ-728  
իրամանագրի 1.6-րդ և 1.20-րդ կետերի դրույթներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ս/թ ապրիլի 15-ից մինչև մայիսի 15-ը անցկացնել բնակավայրի սանիտարական մաքրման,  
ծառատնկման, կանաչապատման, աղբահանման և փողոցների բարեկարգման միամսյակ.  
1) ս/թ ապրիլի 15-ին, 21-ին, 28-ին և մայիսի 5-ին կազմակերպել շաբաթօրյակներ, կատարել  
բնակավայրի սանիտարական մաքրում, բարեկարգել ներհամայնքային ճանապարհները:  
2) « Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատաս-  
խան ամենօրյա ուղադրություն դարձնել համայնքի վարչական սահմաններում գտնվող  
ափամերձ տարածքների, խնամքի ու պահպանության, սանիտարական մաքրման աշխա-  
տանքների կազմակերպման վրա:  
3) Աշխատանքներ տանել համայնքի վարչական սահմաններում գտնվող պատմամշակու-  
թային հուշարձանների և վայրերի սանիտարական մաքրման աշխատանքների կազմա-  
կերպման ուղղությամբ:
2. Նորաշեն համայնքի հիմնական դպրոցի տնօրինությանը՝ ( տնօրեն՝ Ա. Կիրակոյան ),  
շաբաթօրյակներին դպրոցի բակում իրականացնել սանիտարական մաքրման,  
կանաչապատման ու ծառատնկման աշխատանքներ:
3. Որոշման վերաբերյալ համայնքի անդամներին տեղեկացնելու համար՝ գյուղի մարդաշատ  
վայրերում փակցնել հայտարարություններ:
4. Համայնքի ղեկավարի տեղակալին՝ ըստ թաղամասերի կատարել կցումներ  
գյուղապետարանի աշխատակիցներից և ավագանու անդամներից:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գագիկ Բարսեղյանի վրա:
6. Համայնքի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման կատարման մասին մինչև 2012թ. մայիսի 20-ը գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱՍՊԱՐՅԱՆ